ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1953 Общественные науки

Արշ. Հակոբյան

# ՌՈՒՍ ՄԵԾ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՇՏԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ՝ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ*

Հայ ժողովուրդը, որը Սովետական Միության ամենահին ժողովուրդներից մեկն է, դարեր շարունակ զուրկ է եղել պետականությունից և ենթարկվել է օտար նվաճողների ասպատակություններին, որոնք հաճախ սպառնացել են նրա ֆիզիկական գոյությանը։ «Ոչ չգիտե այդ ժողովրդի ողբերգական, կոշմարային անցյալը,—գրել է «Պրավդան»։ —Գտնվելով երկու աշխարհների, երկրագնդի մայր ցամաքների՝ Եվրոպայի և Ասիայի սահմանների վրա... Հայաստանը եղել է անվերջ ճակատամարտերի ու արշավանքների թատերաբեմ։ Մեկ նվաճողներին փոխարինում էին մյուսները։ Ժողովուրդը հազիվ էր կարողանում ուշքի գալ մեկ ավերիչ փոթորիկից, երբ վրա էր հասնում նորը։ Եվ նորից ավերվում էին գյուղերն ու քաղաքները։ Կործանվում էր կուլտուրան, կոտորվում էին հայ աշխատավորները»[1]։

Անդրկովկասի բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի համար ֆիզիկական ոչնչացման վտանգը ավելի սպառնալից է դառնում պարսկական և թյուրքական բռնապետության շրջանում։ «... պարսկական ու թյուրքական ասիմիլատորները,—գրել է ընկեր Ստալինը,—հարյուրավոր տարիներ ծվատում, խոշտանգում ու բնաջնջում էին հայ և վրացի ազգերին, բայց նրանք ոչ միայն չկարողացան ոչնչացնել այդ ազգերին, այլ—ընդհակառակը—հարկադրված եղան նույնպես տեղի տալուց»[2]։

Անդրկովկասի միացումը Ռուսաստանին, որը ավարտվեց 1828 թվականի փետրվարի 22-ին՝ Թուրքմենչայի պայմանագրով, շրջադարձային կետ հանդիսացավ Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների դարավոր պատմության մեջ և պրոգրեսիվ խոշոր նշանակություն ունեցավ նրանց կյանքում։ Այդ միացման շնորհիվ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդները փրկվեցին պարսկական և թյուրքական դեսպոտիզմի բարբարոսական ու վայրագ կամայականություններից։ Սուլթանական Թյուրքիայի տիրապետության տակ մնացած Արևմտյան Հայաստանի ողբերգական վիճակը ցույց տվեց, թե ինչ էր սպասում ամբողջ հայ ժողովրդին, եթե տեղի չունենար Հայաստանի միացումը Ռուսաստանին։

Անդրկովկասի անպաշտպան ժողովուրդները, իրենց բախտը կապելով

---

* Զեկուցված է 1953 թ. մարտի 12-ին, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի սեսիայում, նվիրված Հայաստանը Ռուսաստանին միանալու 125-ամյակին։

[1] «Պրավդա», 28 նոյեմբերի 1935 թ.։

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 395։

ռուս ժողովրդի հետ, ապահովվեցին արտաքին ուժերի մշտական հարձակումներից և նրանց կործանարար հետևանքներից։

Մյուս կողմից՝ այդ միացման հետևանքով, Անդրկովկասում զարգացան կապիտալիստական հարաբերությունները, որոնք նպաստավոր պայմաններ ստեղծեցին տնտեսական ու կուլտուրական վերելքի համար։ Անդրկովկասի ժողովուրդները հնարավորություն ստացան ավելի ամուր կապեր հաստատելու ռուս մեծ ժողովրդի առաջավոր կուլտուրայի հետ։ Անդրկովկասի միացումը Ռուսաստանին, նշանակում էր միացում «ռուս մեծ ազգի, Պլեխանովի և Լենինի, Բելինսկու և Չերնիշևսկու, Պուշկինի և Տոլստոյի, Գլինկայի և Չայկովսկու, Գորկու և Չեխովի, Սեչենովի և Պավլովի, Ռեպինի և Սուրիկովի, Սուվորովի և Կուտուզովի ազգի»[1] հետ։

Որպես այդ միացման անմիջական արդյունք՝ պատմական զարգացման հետագա շրջանում, հայ ժողովրդի պայքարն իր ազատության և անկախության համար, անխզելիորեն շաղկապվում է ամենառևոլյուցիոն դասակարգի, Ռուսաստանի բանվոր դասակարգի և նրա մարտական ավանգարդի՝ Լենինի—Ստալինի պարտիայի գլխավորած մեծ պայքարի հետ։

Ռուսական պրոլետարիատը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ կատարեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, որով նոր դարագլուխ սկսվեց մարդկային հասարակության պատմության մեջ։

Տապալելով շահագործողների տիրապետությունը և փշրելով ազգային ճնշման շղթաները, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան պատմական խոշորագույն դեր կատարեց բոլոր ճնշված ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի կյանքում։ «Պարզ է դառնում,—գրել է ընկեր Ստալինը 1917 թ. դեկտեմբերին «Թյուրքահայաստանի» մասին հայտնի հոդվածում,—որ ճնշված ժողովուրդների ազատագրության ուղին անցնում է Ռուսաստանում հոկտեմբերին սկսված բանվորական ռևոլյուցիայի միջով։ Այժմ պարզ է ամենքի համար, որ Ռուսաստանի ժողովուրդների բախտը, իսկ առանձնապես հայ ժողովրդի բախտը, սերտորեն կապված է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի բախտի հետ։ Հոկտեմբերյան ռևոլյուցիան խորտակեց ազգային ճնշման շղթաները։ Նա պատռեց ցարական գաղտնի պայմանագրերը, որոնք կաշկանդել էին ժողովուրդների ձեռքն ու ոտքը։ Նա, և միայն նա, կկարողանա մինչև վերջը հասցնել Ռուսաստանի ժողովուրդների ազատագրության գործը»։[2]

Ռուսաստանում Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն ուժերը՝ մենշևիկները, դաշնակները և մուսավաթականները, իրենց տերերի՝ գերմանական, ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստների և թյուրքական զավթիչների թելադրանքով և ամենագործոն օգնությամբ Անդրկովկասը անջատեցին Սովետական Ռուսաստանից և այնտեղ հաստատեցին բուրժուա-նացիոնալիստական մարիոնետային իշխանություններ, որոնց գոյությունը տևեց մոտ երեք տարի։ Անդրկովկասի ժողովուրդների այդ ստոր թշնամիները, գործելով օտարերկրյա իմպերիալիստների թելադրանքով, ամեն կերպ

---

1 Ի. Վ. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին, էջ 35։

2 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 30—31։

ձգտում էին ոչ միայն Անդրկովկասը և նրա ժողովուրդներին կտրել ռուս մեծ ժողովրդից, ոչնչացնել նրանց միջև հաստատված դարավոր եղբայրական կապերը, նրանց հեռու պահել Ռուսաստանից ու Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նվաճումներից, այլև գործադրում էին ամեն միջոց, որպեսզի այդ ժողովուրդներին հանեն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի դեմ, ռուս մեծ ժողովրդի դեմ։ Նրանք ձգտում էին Անդրկովկասը դարձնել օտարերկրյա իմպերիալիստների գաղութ, ստրկացնել և բնաջնջման հասցնել մեր երկրի ժողովուրդներին։

Անդրկովկասի ժողովուրդները, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ, կազմակերպություններ, որոնց ստեղծել և թշնամիների դեմ մղած մարտերում կոփել է ընկեր Ստալինը,—չխոնարհեցին իրենց գլուխը օտարերկրյա իմպերիալիստների և նրանց վարձկան դաշնակների, մուսավաթականների, մենշևիկների ու մյուսների առաջ, շարունակեցին հերոսական պայքարը՝ հանուն Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի Անդրկովկասում, հանուն եղբայրական անխզելի կապերի ամրապնդման ռուս մեծ ժողովրդի հետ։

Անդրկովկասի ժողովուրդների այդ պայքարը նոր, ավելի հուժկու վերելք ապրեց 1920 թ. գարնանը, երբ Սովետական Ռուսաստանի հերոսական Կարմիր Բանակը իրականացնելով Դենիկինի ջախջախման ստալինյան պլանը, մեծ հաջողությամբ առաջ շարժվեց դեպի հարավ և ընդհուպ մոտեցավ Անդրկովկասին։ Սովետական Ռուսաստանի 11-րդ բանակը Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ցուցումներով եղբայրական օգնության հասավ Ադրբեջանի ապստամբած աշխատավորությանը և այդ օգնության շնորհիվ այնտեղ հաստատվեցին սովետական կարգեր։

Շարունակելով հերոսական պայքարը, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, 1920 թ. նոյեմբերի վերջերին Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ նոր զինված ապստամբություն սկսեցին ընդդեմ դաշնակների մարիոնետային իշխանության։ Քարվանսարայում (այժմ Իջևան) սկսված ապստամբությունը մեծ արագությամբ ծավալվեց ամբողջ երկրում։

Նոյեմբերի 29-ին կազմակերպվում է Հայաստանի Ռևոլյուցիոն Կոմիտեն (Ռևկոմը), որը հաջորդ օրը՝ նոյեմբերի 30-ին, ապստամբների հետ միասին արդեն գտնվում էր Դիլիջանում։

Այդ նույն օրը Հայաստանի նորակազմ Ռևկոմը հեռագրով դիմում է Սովետական Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ Վ. Ի. Լենինին, ողջունելով նրան և խնդրելով Սովետական Ռուսաստանի, ռուս մեծ ժողովրդի օգնությունը Հայաստանի ապստամբ բանվորներին ու գյուղացիներին։

Հեռագրում ասված է.

«Թող հայտնի լինի համաշխարհային ռևոլյուցիայի առաջնորդին, որ Դիլիջանի և Քարվանսարայի շրջանների գյուղացիները զայրացած դաշնակների կառավարության հանցագործ քաղաքականությունից և երկրում սկսված անարխիայի խորացումից, բարձրացրին ապստամբության դրոշը։ Հայաստանի Կոմունիստական պարտիան անմիջապես իր ձեռքը վերցրեց այդ տարերային շարժման ղեկավարությունը և ստեղծեց Հայաստանի Ռևկոմ, հայտարարելով Հայաստանը Սովետական Սոցիալիստական ռես-

պուբլիկա։ Առաջին հարվածը հասցված է—Դիլիջան քաղաքը մեր ձեռքումն է։ Ոգևորված ապստամբները շարժվում են առաջ, ատելի թշնամուն՝ Անտանտայի գործակալին վերջնականապես կործանելու համար։ Եվ, կատարելով նրանց կամքը, կազմելով Ռեկոմ, առաջ ենք շարժվում, լի հույսով, որ Արևելքի ճնշված ժողովուրդների ազատարարը—Սոցիալիստական Մեծ Ռուսաստանի հերոսական Կարմիր Բանակը ցույց կտա մեզ իրական օգնություն։ Հայաստանի բոլոր բանվորների ու գյուղացիների անունից խնդրում ենք ցույց տալ այդ օգնությունը։ Կեցցե՛ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական ռեսպուբլիկան։ Կեցցե՛ նրա հաղթական Կարմիր Բանակը»[1]։

Վ. Ի. Լենինի ցուցումով հերոսական 11-րդ Կարմիր Բանակի զորամասերը, որոնք գտնվում էին Սովետական Ադրբեջանում, օգնության են հասնում Հայաստանի ապստամբ բանվորներին ու գյուղացիներին։ Հաղթական կերպով առաջ շարժվելով, ապստամբները, 11-րդ բանակի զորամասերի հետ միասին, 1920 թ. դեկտեմբերի 2-ին մտնում են Երևան։ Ռուս մեծ ժողովրդի, նրա փառապանծ 11-րդ բանակի եղբայրական օգնությամբ Հայաստանի մայրաքաղաքի վրա բարձրանում է սոցիալիստական ռևոլյուցիայի ազատարար կարմիր դրոշը։

Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակն էր ռուսական ցարիզմի նախկին գաղութում։ Կործանման վտանգի տակ կանգնած հայ ժողովուրդը սովետական կարգերի հաստատումով ձեռք բերեց իր պետականությունը, իր ազատությունն ու անկախությունը։ Իրականացավ ազատասեր հայ ժողովրդի դարավոր իղձը, սկսվեց նրա իսկական վերածնությունը, նրա պատմության նոր դարաշրջանը։

Այդ հաղթանակը անհնարին էր առանց ռուս մեծ ժողովրդի եղբայրական աջակցության, որովհետև դաշնակների թիկունքում կանգնած էին և նրանց ամեն կերպ օգնում էին անգլիական, ամերիկյան, ֆրանսիական և գերմանական իմպերիալիստները։ Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում խոշոր հարված էր միջազգային իմպերիալիստական ռեակցիային։

Այդ պատմական հաղթանակի առթիվ Հայաստանի բազմահազար աշխատավորները իրենց անսահման երախտագիտության ու ողջույնի առաջին խոսքն ուղղեցին Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի հանճարեղ կազմակերպչին ու առաջնորդին՝ Վ. Ի. Լենինին։ «Խիտ և կուռ շարքերով համախմբվելով Կոմունիստական կարմիր դրոշների շուրջը,—ասված է 1920 թ. դեկտեմբերի 6-ին Երևանում գումարված բազմահազար աշխատավորների միտինգում ընդունած ողջույնի հեռագրում,—աշխատավորությունը հանձինս Ձեզ՝ ողջունում է Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդին, հեղափոխություն, որի ալիքները խորտակելով ու ոչնչացնելով բոլոր արգելքները, հասան հեռավոր Հայաստանին։

...Մտնելով Խորհրդային Հանրապետությունների պրոլետարական ընտանիքի մեջ, մենք հետևում ենք Հոկտեմբերյան հեղափոխության հերոսական օրինակին։

[1] Газета „Жизнь национальностей", № 39 (95), 8 декабря 1920 г.

Ունենալով ռուս բանվորների անցյալի փորձը, և ստանալով աշխատավորական Ադրբեջանի ու Ռուսաստանի օգնությունը, Խորհրդային Հայաստանի երիտասարդ հանրապետությունը համարձակ և անվախ դիմում է դեպի ապագան և բնավ չի կասկածում, որ աշխատանքը վերջնականապես հաղթանակելու է կապիտալին»[1].

* *
*

Սովետական կարգերի հաղթանակի շնորհիվ ձեռք բերելով իր իսկական ազատությունն ու պետականությունը, հայ ժողովուրդը Սովետական Ռուսաստանի կառավարության հետ պետական ամուր կապերի մեջ է մբռնում՝ հետզհետե ավելի ու ավելի ուժեղացնելով ու սերտ դարձնելով այդ կապերը, որոնց հիմքում ընկած են սուվերեն իրավահավասարությունը և ազգային շահերի փոխադարձ պաշտպանությունը՝ հանուն տնտեսական, քաղաքական ու ռազմական միասնության, հանուն կոմունիստական հասարակարգի կառուցման։

Այդ սկզբունքների հիման վրա էլ Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ՝ օրերին՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Սովետական Ռուսաստանի ու Սովետական Հայաստանի կառավարությունների միջև Երևանում կնքվում է դաշնագիր, որի մեջ նշվում է, որ Հայաստանը հայտարարվում է սոցիալիստական անկախ ռեսպուբլիկա, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը, որպես դաշնակից, ձեռք է առնում միջոցներ անմիջապես պահանջվող քանակությամբ ռազմական ուժեր կենտրոնացնելու՝ Հայկական ՍՍՌ-ի անկախությունը պաշտպանելու նպատակով[2]։ Որպես այդ պայմանագրի լրացում, 1921 թ. սեպտեմբերի 30-ին Սովետական Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվում է պայմանագիր ֆինանսական-տնտեսական հարցերի շուրջը[3]։ Այդ պայմանագրի համաձայն Սովետական Ռուսաստանի կառավարությունը խոշոր ֆինանսական-տնտեսական օգնություն է ցույց տալիս տնտեսական ծանր վիճակում գտնվող Սովետական Հայաստանին։

Այդ պայմանագրերը՝ ռուս մեծ ժողովրդի, նրա Սովետական կառավարության և գարեր շարունակ պետականությունից զուրկ, իսկ այժմ իր պետականությունը ձեռք բերած փոքրիկ հայ ժողովրդի ու նրա Սովետական կառավարության միջև, խոշորագույն քաղաքական նշանակություն ունեցան հայ ժողովրդի համար, նրա էկոնոմիկայի ու կուլտուրայի հետագա ծաղկման համար։

Սովետական Հայաստանի աշխատավորները դեռ նոր էին ձեռնամուխ եղել սոցիալիստական շինարարությանը, երբ ժողովրդի ու սովետական կարգերի կատաղի թշնամի դաշնակները ամերիկյան, անգլիական, ֆրանսիական իմպերիալիստների և թյուրքական զավթիչների թելադրանքով ու օգնությամբ, 1921 թ. փետրվարի կեսերին, — այսինքն Հայաստանում սովետական կարգերի հաստատումից երկու ու կես ամիս

---

[1] «Կոմունիստ» (հայերեն), օրգան ՀԿ(բ)Պ կենտրոնական և Երևանի կոմիտեների ու Հայաստանի ՌԿԿոմի, № 3, 8 դեկտեմբերի 1920 թ.։

[2] Տես՝ Ю. В. Ключников и А. В. Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. III, вып. I, Литиздат НКИД, Москва, 1928, стр. 75—76.

[3] Տես՝ ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, 124, գ. 3, թթ. 8—9։

հետո,—զինված եռությամբ հանդես են գալիս Սովետական իշխանության դեմ։ Փետրվարյան այդ ավանտյուրայով Հայաստանում սկսվում են քաղաքացիական կռիվները, որոնք տևում են մոտ հինգ ամիս և խոշոր մարդկային զոհեր ու նյութական վնասներ են պատճառում հայ ժողովրդին, սպառնալով Հայաստանում Սովետական իշխանության գոյությանը։

Այս ծանր օրերին, հայ ժողովրդին, Սովետական Հայաստանին՝ որպես նրա դաշնակիցը, եղբայրական օգնության է հասնում ռուս մեծ ժողովուրդը։ Ամբողջ քաղաքացիական կռիվների ընթացքում, Սովետական Հայաստանի բանվորները, գյուղացիներն ու զինվորները սովետական կարգերի ներքին ու արտաքին թշնամիների դեմ պայքարում էին Սովետական Ռուսաստանի 11-րդ բանակի զորամասերի հետ միասին։ Սովետական Հայաստանի աշխատավորները տեսնում էին, որ իրենց հետ է ամբողջ Սովետական Ռուսաստանը, ռուս հերոս ժողովուրդը։ Այդ էլ ավելի էր բարձրացնում նրանց մարտական կորովը։

Այդ քաղաքացիական կռիվների ժամանակ՝ հանուն հայ ժողովրդի ապատության ու անկախության, հանուն նրա պայծառ ապագայի իրենց կյանքն են զոհաբերում ռուս մեծ ժողովրդի քաջարի զավակներից շատերը։ Նրանցից են՝ Հայկական 2-րդ հրաձգային բրիգադի հրամանատար Երմոլենկոն, որը հերոսի մահով ընկավ 1921 թ. փետրվարի 17-ին Քանաքեռի մոտ տեղի ունեցած մարտերում, Հայկական առաջին բրիգադի հրետանու պետ Սիմյոնովը, որը զոհվեց Քիչիկ-Վեդիի և Խոր-Վիրապի (Վեդիբասարի շրջան) մոտ տեղի ունեցած մարտերում՝ 1921 թ. մարտի 8-ին, և ուրիշները, որոնց անունները հայ ժողովուրդը հիշատակում է անհուն երախտագիտությամբ և երբեք չի մոռանա։

Քաղաքացիական կռիվներն ավարտվում են 1921 թ. հուլիսի կեսերին՝ Հայաստանի բանվորների ու գյուղացիների խոշոր հաղթանակով։ Թշնամին գլխովին ջախջախվում է, իսկ նրա մնացորդները դուրս են շպրտվում երկրից։ Զանգեզուրը, որ մինչև այդ գտնվում էր դաշնակների ձեռքում, միացվում է Սովետական Հայաստանին։

Ընդհատելով ռուս ժողովրդի օգնության խոշորագույն նշանակությունը Անդրկովկասի ժողովուրդների ազատագրության գործում, 1922 թ. դեկտեմբերին Ս. Օրջոնիկիձեն ասել է. «Սովետական իշխանության գոյությամբ, իրենց ազատագրմամբ՝ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի աշխատավոր մասսաները ամբողջովին պարտական են Ռուսաստանին։ Եթե չլիներ Սովետական Ռուսաստանը, չէր լինի Սովետական Ադրբեջանը, Սովետական Վրաստանը, Սովետական Հայաստանը և մինչև այսօր էլ նրանք ընկած կլինեին անգլիական իմպերիալիզմի կրնկի տակ։

Միայն Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ, Ռուսաստանի Կարմիր Բանակի հետ դաշինք կնքելով ադրբեջանական բանվորներն ու գյուղացիները, վրացական բանվորներն ու գյուղացիները, հայկական բանվորներն ու գյուղացիները ձեռք բերին իրենց ազատագրումը»։

Սովետական կարգերի հաստատման ժամանակ Հայաստանը գտնվում էր ծայրահեղ քայքայված վիճակում։ Երկարատև պատերազմները և դաշ-

---

[1] Դ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Հայպետհրատ, Երևան, 1950, էջ 111։

նակների ավանտյուրիստական քաղաքականությունը խոպոռ քայքայել էին երկրի էկոնոմիկան։ Հայաստանը լցված էր բազմահազար գաղթականներով։ Սովը և համաճարակային հիվանդությունները սպառնում էին տասնյակ հազարավոր մարդկանց կյանքին։ Մյուս կողմից՝ Ալեքսանդրոպոլ (այժմ Լենինական) քաղաքը իր գավառով գտնվում էր թյուրքական զավթիչների ձեռքում, որոնք այնտեղ մտել էին 1920 թ. նոյեմբերին՝ դաշնակո-թյուրքական պատերազմի ժամանակ և շարունակում էին ամենաբարբարոսական ձևով թալանել ու ոչնչացնել հայ բնակչությանը։

Իր սեփական ուժերով ու միջոցներով Սովետական Հայաստանը ի վիճակի չէր հաղթահարելու ստեղծված այդ դժվարությունները։ Նա անհրաժեշտ էր անհրաժեշտ օգնության, ազնիվ և անկեղծ օգնության խիստ կարիք էր զգում, որը կարող էր ստանալ և իրոք ստացավ Սովետական Ռուսաստանից և մյուս սովետական ռեսպուբլիկաներից։

Սովետական Ռուսաստանը, որը այդ ժամանակ նոր էր դուրս եկել քաղաքացիական կռիվներից, նույնպես գտնվում էր տնտեսական ծանր վիճակում։ Առաջին իմպերիալիստական պատերազմը և նրան հաջորդող քաղաքացիական կռիվները ծայրահեղ չափով քայքայել էին նրա էկոնոմիկան։

Չնայած դրան, ռուս մեծ ժողովուրդը, բացի քաղաքական, ռազմական-բարոյական օգնությունից, իր սուղ միջոցներից նյութական հսկայական օգնություն է ցույց տալիս մեր երկրի բոլոր ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդին։ Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ցուցումներով Սովետական Ռուսաստանը Հայաստան է ուղարկում հսկայական քանակությամբ հացահատիկ, վառելանյութ, դեղորայք, մանուֆակտուրա, և այլ տեսակի կենսամթերքներ ու ապրանքներ։ Ռուսաստանից Հայաստան են ուղարկվում մեծ քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ, մեքենայական սարքավորումներ, նույնիսկ ամբողջ գործարաններ՝ իրենց մեքենաներով, ինչպես, օրինակ, Լենինականի տեքստիլ գործարանը, որով ռեսպուբլիկայում հիմք դրվեց տեքստիլ արդյունաբերության զարգացմանը։ Բացի այդ բոլորից, Սովետական Ռուսաստանը Հայաստանին ցույց է տալիս ֆինանսական խոշոր օգնություն։

Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայիններին առաջին համագումարում (1922 թ. փետրվար) արձանագրվում է, որ միայն 1921 թ. ընթացքում Ռուսաստանից Հայաստան է ուղարկվել 2 միլիոն 890 հազար փութ կենսամթերք։ Այդ օգնության շնորհիվ Հայաստանում արագ կերպով լիկվիդացվում են սովն ու համաճարակային հիվանդությունները։

Ինչպես նշեցինք, Հայաստանում սովետական կարգերի հաստատման ժամանակ Ալեքսանդրոպոլն իր գավառով գտնվում էր թյուրքական օկուպանտների ձեռքում։ Նրանք ոչ միայն չէին կամենում հեռանալ Ալեքսանդրոպոլից, այլև ձգտում էին տիրանալ ամբողջ Հայաստանին ու Անդրկովկասին։ Դրա համար թյուրքական զավթիչները օգտագործում էին դաշնակներին ու մյուս կոնտրռևոլյուցիոն թափթփուկներին, որոնք սողում էին նրանց ոտքերի տակ։

Այստեղ ևս հայ ժողովրդին օգնության է հասնում Սովետական Ռուսաստանի կառավարությունը։ Սովետական Ռուսաստանի կառավարության

ցուցումով 11-րդ բանակի հրամանատարությունը ուլտիմատում է ներկայացնում քեմալական զորքերի հրամանատարությանը, պահանջելով մինչև 1921 թ. ապրիլի 22-ը հեռանալ Ալեքսանդրոպոլից։ Նշանակված օրը քեմալական օկուպանտները ետ են քաշվում Ալեքսանդրոպոլից և 11-րդ բանակի ու հայկական Կարմիր Բանակի զորամասերը ազատագրում են Ալեքսանդրոպոլն իր գավառով։

Թյուրքիան ամեն կերպ ձգտում էր Անդրկովկասյան Սովետական ռեսպուբլիկաների հետ պայմանագրեր կնքել առանձին-առանձին, նպատակ ունենալով դրանով իսկ թելադրել նրանց իր կամքը։ Սակայն այդ ևս նրան չի հաջողվում։ Անդրկովկասյան Սովետական ռեսպուբլիկաները՝ Ադրբեջանը, Վրաստանը և Հայաստանը, Սովետական Ռուսաստանի օգնությամբ Թյուրքիայի դեմ հանդես են գալիս միասնաբար։ 1921 թ. հոկտեմբերի 13-ին, Կարսում, Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ՝ մի կողմից Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի, մյուս կողմից քեմալական Թյուրքիայի միջև կնքվում է պայմանագիր, որով վճռական հակահարված է տրվում քեմալականների զավթողական ձգտումներին Հայաստանի ու ամբողջ Անդրկովկասի նկատմամբ։ «... Թյուրքիայի հետ միասնական պայմանագիր կնքվելը մի ավելորդ անգամ ցույց է տալիս,—ասել է Ս. Օրջոնիկիձեն,—որ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը հանդես են գալիս որպես միասնական ամբողջություն, որպես մեկ միասնական եղբայրական ռեսպուբլիկա»[1]։

Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը բուրժուական նացիոնալիզմի իդեոլոգիային հակադրեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի իդեոլոգիան, ժողովուրդների ազատության, սուվերեն իրավահավասարության և եղբայրական համագործակցության գաղափարը։ 1922 թ. մարտին կազմակերպվում է Անդրկովկասյան ֆեդերացիան, որ հանդիսացավ լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության փայլուն հաղթանակ։ Ֆեդերացիան լայն հնարավորություններ է ստեղծում սոցիալիստական շինարարության ծավալման համար. էլ ավելի է ամրապնդվում տնտեսական, քաղաքական և կուլտուրական կապերը մի կողմից, Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների, մյուս կողմից՝ այդ ռեսպուբլիկաների ու Սովետական Ռուսաստանի միջև։

1922 թ. դեկտեմբերին կազմակերպվում է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունը։ Սովետական Միության ստեղծումը, որի ոգեշնչողն ու կազմակերպիչներն են հանդիսանում Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը, խոշորագույն պատմական իրադարձություն էր սովետական բոլոր ժողովուրդների կյանքում։ Այդ միասնական սոցիալիստական հզոր պետությունը հետևողականորեն կենսագործելով Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը, ապահովում է մեր երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների եղբայրական համագործակցությունը, նրանց յուրաքանչյուրի ազգային շահերը համաչափ կերպով ներդաշնակելով սոցիալիստական շինարարության ընդհանուր շահերի հետ։

Ժողովուրդների բարեկամության և եղբայրական համագործակցու-

---

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ ու ճառեր, էջ 109—110։

թյան համար մղվող պայքարում, կոմունիստական հասարակության համար մղվող պայքարում Կոմունիստական պարտիան Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ մինչև վերջ մերկացրեց ու ջախջախեց օտարերկրյա իմպերիալիստների վարձկանները՝ տրոցկիստներին, բուխարինականներին, զինովևականներին, բուրժուական նացիոնալիստներին և ժողովրդի մյուս թշնամիներին, որոնք ձգտում էին, և նրանց թափթփուկները այժմ էլ ձգտում են քայքայելու մեր երկրի ժողովուրդների լենինյան-ստալինյան բարեկամությունը, թուլացնելու և կազմալուծելու նրա բարձրագույն ձևը հանդիսացող մեր բազմազգ սոցիալիստական պետությունը՝ Սովետական Միությունը։

«Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի և սոցիալիստական բարեփոխումների շնորհիվ մեր երկրի բոլոր ժողովուրդները միմյանց հետ կապված են ամուր բարեկամությամբ՝ լիակատար իրավահավասարության հիման վրա,—ասաց ընկեր Մալենկովը պարտիայի XIX համագումարում։—Մեր պարտիան, անշեղորեն վարելով լենինյան-ստալինյան ազգային քաղաքականություն, ամրապնդեց սովետական բազմազգ պետությունը, զարգացրեց բարեկամությունն ու փոխադարձ համագործակցությունը Սովետական Միության ժողովուրդների միջև, ամեն կերպ պաշտպանեց, ապահովեց և խրախուսեց մեր երկրի ժողովուրդների ազգային կուլտուրաների ծաղկումը, անհաշտ պայքար մղեց բոլոր և ամեն տեսակի նացիոնալիստական տարրերի դեմ»։

Սովետական Միության ստեղծման, նրա հետագա ամրապնդման ու համաշխարհային-պատմական հաղթանակների ձեռք բերման գործում առաջատար դեր է կատարել ու կատարում է ռուս մեծ ազգը, որը, ինչպես ընկեր Ստալինն է բնորոշել, «Սովետական Միության կազմի մեջ մտնող բոլոր ազգերից առավել ականավոր ազգն է»։

«ՍՍՌՄ-ի ստեղծումը,—ասված է ընկեր Ստալինի համառոտ կենսագրության մեջ,—նշանակում էր լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության խոշոր հաղթանակը։ Սովետական Միությունը ստեղծվեց դեպի ռուս մեծ ժողովուրդը նախկինում ցարիզմի կողմից ճնշված ժողովուրդների վստահության անսասան հիմքի վրա, Սովետական երկրի ժողովուրդների բարեկամության ամուր հիմքի վրա»[3]։

ՍՍՌՄ-ի կազմակերպումը նախապատրաստելու և իրականացնելու գործում խոշորագույն դեր է կատարել ընկեր Ստալինի գլխավորած Ազգությունների Ժողովրդական Կոմիսարիատը։

Սովետական Միության կազմակերպումը մեր երկրի բանվորների ու գյուղացիների ներքին գործը չէր միայն։ Նրա պատմական խոշորագույն նշանակությունը դուրս է գալիս մեր երկրի սահմաններից, ստանալով միջազգային բնույթ։ «Ինչ վերաբերում է այդ Միության միջազգային նշա-

---

[1] Գ. Մ. Մալենկով, Հաշվետու զեկուցում պարտիայի XIX համագումարին, Համկ(բ)Պ կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, Հայպետհրատ, 1952, էջ 93։

[2] Ի. Վ. Ստալին, Սովետական Միության հայրենական Մեծ պատերազմի մասին, Հայպետհրատ, 1950 թ., էջ 233։

[3] Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին, համառոտ կենսագրություն, Երևան, 1947, էջ 96—97։

նակությանը,—ասում է ընկեր Ստալինը,—ապա նա հազիվ թե առանձին պարզարանումների կարիք ունի»[1]։

Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը Կոմունիստական պարտիայի, Սովետական Միության առաջ մարտական խնդիր դրեցին՝ բազմակողմանի օգնություն կազմակերպել մեր երկրի այն բոլոր ժողովուրդներին, որոնք դարեր շարունակ ճնշվել և կեղեքվել են ցարական Ռուսաստանի տիրող դասակարգերի ու սեփական բուրժուազիայի կողմից։ Այդպիսի ժողովուրդների թվին է պատկանել նաև հայ ժողովուրդը։

Սովետական Հայաստանը, մտնելով աշխարհում ամենազոր պետության՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության մեջ՝ մինչև 1936 թվականը Անդրկովկասյան ֆեդերացիայի միջոցով, իսկ դրանից հետո ուղղակի հանդիսանալով նրա իրավահավասար անդամներից մեկը, մեր երկրի ժողովուրդների լենինյան-ստալինյան ընտանիքում թևակոխեց իր զարգացման մի նոր փուլ, որով ապահովվեց նրա էկոնոմիկայի և կուլտուրայի արագ ծաղկումը, բարգավաճումն ու վերելքը։

Ռուս ժողովրդի մշտական և բազմապիսի օգնությամբ Սովետական Հայաստանի աշխատավորությունը՝ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հաջողությամբ ավարտեց ժողովրդական տնտեսության վերականգնումը։ Հնի վերականգնման զուգընթաց, այդ ժամանակաշրջանում Սովետական Հայաստանում հիմք է դրվում արդյունաբերական մի շարք նոր ճյուղերի, որոնք նախասովետական շրջանում չկային. դրանցից են տեքստիլ արդյունաբերությունը, շինանյութերի արտադրությունը, քիմիական (կարբիդի) արդյունաբերությունը և այլն, որոնց մեքենայական սարքավորումը ապահովվել է Սովետական Ռուսաստանից ստացված ժամանակակից մեքենաներով։

Հայկական ՍՍՌ-ում սոցիալիստական շինարարությունը ավելի լայն ծավալ է ընդունում երկրի ինդուստրացման տարիներին՝ 1926—1929 թվականներին։ Սովետական Միության կառավարության, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ այդ տարիներին խոշոր ներդրումներ են կատարվել ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ։ Եթե սովետական կարգերի հաստատումից մինչև 1925 թ. ներառյալ Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվել է 15,77 միլիոն ռուբլի, ապա հետագա երեք տարիների ընթացքում՝ 1926—1928 թվականներին ներդրվել է 47,33 միլիոն ռուբլի, որի խոշորագույն մասը հատկացվել է երկրի ինդուստրացմանը։ Այդ տարիներին ևս Հայաստանում ստեղծվում են արդյունաբերության մի շարք նոր ճյուղեր։ Զգալի չափով ընդարձակվում են էլեկտրաէներգիայի արտադրությունը, պղնձի, տեքստիլ, սննդի, պոլիգրաֆ արդյունաբերությունը և այլն։

Նշանակալից հաջողություններ են ձեռք բերվում նաև մեր երկրի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ։ 1929 թ. դեկտեմբերին ընկեր Ստալինը գրել է. «Խոսքը վերաբերում է մեր հողագործության զարգացման մեջ տեղի ունեցած արմատական բեկումներ մանր ու հետամնաց անհատական տնտեսությունից դեպի խոշոր ու առաջավոր կոլեկտիվ հողագործությունը, դեպի հողի միատեղ մշակումը,

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 101.

դեպի մեքենա-տրակտորային կայանները, դեպի արտելները, կոլխոզները, որոնք հենվում են նոր տեխնիկայի վրա, վերջապես դեպի սովխոզ-գիգանտները, որոնք զինված են հարյուրավոր տրակտորներով ու կոմբայններով[1]։

Սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում ձեռք բերված պատմական հաղթանակների շնորհիվ, երկրի ինդուստրացման շրջանի վերջում Սովետական Միությունում ավարտվում է մեր երկրի հին, բուրժուական ազգերի լիկվիդացումը և նոր, սոցիալիստական ազգերի ձևավորումը, որը սկսված էր Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի ժամանակաշրջանից։ Հին բուրժուական ազգի փլատակների վրա Սովետական Հայաստանում ևս ձևավորվեց նոր, սոցիալիստական հայ ազգը։

«...Բուրժուական ազգերի լիկվիդացումը նշանակում է ոչ թե ընդհանրապես ազգերի լիկվիդացում,— ասում է ընկեր Ստալինը,— այլ միմիայն բուրժուական ազգերի լիկվիդացում։ Հին, բուրժուական ազգերի փլատակների վրա ծագում և զարգանում են նոր, սոցիալիստական ազգեր, որոնք անհամեմատ ավելի համախմբված են, քան ամեն մի բուրժուական ազգ, որովհետև նրանք զերծ են բուրժուական ազգերին մաշող անհաշտելի դասակարգային հակասություններից և անհամեմատ ավելի համաժողովրդական են, քան որևէ բուրժուական ազգ»[2]։

Ստալինյան հնգամյակների տարիները՝ ամբողջ Սովետական Միության սոցիալիստական բուռն շինարարության հետագա տարիները, միաժամանակ հանդիսացան մեր երկրի նոր, սոցիալիստական ազգերի էկոնոմիկայի ու կուլտուրայի աննախընթաց զարգացման ու ծաղկման տարիներ։ Դրա գեղեցիկ օրինակներից մեկը Սովետական Հայաստանն է և սոցիալիստական հայ ազգը, որի բոլոր հաջողություններն անխզելիորեն կապված են ռուս մեծ ազգի անվան հետ, նրա կողմից Սովետական Հայաստանին մշտապես ցույց տրվող անշահախնդիր և անբասիր եղբայրական օգնության հետ, սովետական ժողովուրդների լենինյան-ստալինյան բարեկամության և համագործակցության հետ։

Ստալինյան հնգամյակների կենսագործման շնորհիվ Սովետական Հայաստանը դարձավ զարգացած սոցիալիստական արդյունաբերության և առաջավոր կոլտնտեսային գյուղատնտեսության ռեսպուբլիկա։ Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ, ռուս և սովետական մյուս ժողովուրդների օգնության շնորհիվ, Սովետական Հայաստանում ստեղծվեցին արդյունաբերության բազմաթիվ նոր ճյուղեր՝ քիմիական, մետաղամշակման, շինանյութերի, սննդի և այլն,— որոնք միութենական նշանակություն ունեն։ Ռեսպուբլիկայում կառուցվել և աշխատում են հարյուրավոր նոր գործարաններ, որոնք հագեցված են Սովետական Ռուսաստանում արտադրված ժամանակակից մեքենաներով ու տեխնիկական սարքավորումներով։

Դյումուշգեսի գործարկումով, որը տեղի է ունենալու այս տարի, Սովետական Հայաստանի էլեկտրակայանների կարողությունը ավելանալու է 2,3 անգամ։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 140—141։
[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 337։



ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

Կոլտնտեսային կարգերի հաղթանակի շնորհիվ, գյուղում տեղի ունեցած այդ ռևոլյուցիոն հեղաշրջման շնորհիվ, հեղաշրջում, որն իր հետևանքներով 1917 թվականի հոկտեմբերի ռևոլյուցիոն հեղաշրջմանը հավասար նշանակություն ուներ[1], Սովետական Միության բոլոր ազգերն ու ժողովուրդները, նրանց հետ նաև հայ ազգը, բարձրացան մինչև սոցիալիզմի մակարդակը։

Սովետական ժողովուրդների համաշխարհային պատմական հաղթանակները սոցիալիզմի համար մղվող պայքարում, սովետական ժողովուրդների լենինյան-ստալինյան անխախտ բարեկամության հաստատման գործում անխզելիորեն կապված են մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինի անվան հետ։ «Ընկեր Ստալինի անդուլ ջանքերի շնորհիվ,—ասում է ընկեր Մալենկովը,—նրա մշակած պլաններով մեր պարտիան նախկինում հետամնաց երկիրը դարձրեց ինդուստրիալ-կոլտնտեսային հզոր տերություն, ստեղծեց նոր տնտեսակարգ, որը չգիտե ճգնաժամեր և գործազրկություն»[2]։ Այդ պատմական հաղթանակներն ամրապնդված են աշխարհում ամենադեմոկրատական Կոնստիտուցիայի՝ Ստալինյան Կոնստիտուցիայի մեջ, որը ելնում է նրանից, որ մեր երկրի բոլոր ազգերը և ժողովուրդները, մեծերը և փոքրերը, օգտվում են միևնույն իրավունքներով տնտեսական, պետական, հասարակական, կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում։

Մեր երկրում տեղի ունեցած պատմական խոշորագույն վերափոխությունների գործում, որոնք արձանագրված են Ստալինյան Կոնստիտուցիայի մեջ, խոշորագույն ավանդ է մտցրել ռուս մեծ ժողովուրդը, որը կոմունիզմի համար մղվող պայքարում հանդիսանում է մեր երկրի ժողովուրդների առաջատար ուժը։

Սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ, ինչպես ամբողջ Սովետական Միությունում, նույնպես նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Սովետական Հայաստանում, ձևավորվեցին բոլորովին նոր հասարակական դասակարգեր՝ սովետական բանվոր դասակարգը, որը ազատ է կապիտալիստական շահագործումից, սովետական կոլտնտեսային գյուղացիությունը, որը վերջնականապես ազատագրված է բուրժուական-կալվածատիրական ճնշումից ու շահագործումից, սովետական ինտելիգենցիան, որը դուրս է եկել բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ծոցից։

Այդպիսի եղբայրական դասակարգերից ու միջնաշերտերից բաղկացած նոր, սոցիալիստական ազգերի մասին ընկեր Ստալինը գրում է. «Բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինք ազգի ներսում՝ կապիտալիզմի մնացորդները լիկվիդացնելու համար հանուն սոցիալիզմի հաղթական շինարարության, ազգային ճնշման մնացորդների ոչնչացում հանուն ազգերի և ազգային փոքրամասնությունների իրավահավասարության ու ազատ զարգացման, նացիոնալիզմի մնացորդների ոչնչացում հանուն ժողովուրդների միջև բարեկամություն ստեղծելու և ինտերնացիոնալիզմ հաստատելու, միասնական ճակատ բոլոր ճնշված ու ոչ լիիրավ ազգերի հետ դավթումների ու դավթողական պատերազմների դեմ

[1] Ի. Վ. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 621։

[2] Գ. Մ. Մալենկով, Ճառ ազգ միտինգում Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի խաղման օրը, Հայպետհրատ, 1953, էջ 9։

մղվող պայքարում, իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում,— այս է այդ ազգերի հոգևոր ու սոցիալ-քաղաքական կերպարանքը»[1]։

Էկոնոմիկայում և սոցիալ-դասակարգային կառուցվածքում տեղի ունեցած մեծագույն փոփոխություններին զուգընթաց՝ հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցավ իսկական կուլտուրական ռևոլյուցիա։ Քորտակվեցին ու ոչնչացան ժողովրդական մասսաներին կաշկանդող խավարն ու կուլտուրական հետամնացությունը։ Ռեսպուբլիկայում աննախընթաց ծավալ ընդունեց ժողովրդական լուսավորության ու կրթության գործը, իսպառ լիկվիդացվեց անգրագիտությունը։ 1914 թ. համեմատությամբ, Սովետական Հայաստանում մասսայական դպրոցներում սովորողների թիվը 1940 թ. ավելացել էր 9,4 անգամ[2]։ 1918—1919 ուսումնական տարում Հայաստանում սովորող 18,600 աշակերտի դիմաց ռեսպուբլիկայի մասսայական դպրոցներում այժմ սովորում են մոտ 300 հազար աշակերտ։ Ներկայումս ռեսպուբլիկայի գյուղական վայրերում հաջողությամբ իրագործվում է յոթնամյա պարտադիր ուսուցումը, իսկ քաղաքում՝ միջնակարգ պարտադիր ուսուցումը։ Ռեսպուբլիկայի մասսայական դպրոցներում դասավանդում են ավելի քան 15 հազար ուսուցիչներ։

Ինչպես հայտնի է, նախասովետական Հայաստանում չի եղել ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն, իսկ այժմ դրանց թիվը հասնում է 17-ի՝ 16000 ուսանողներով։ Սովետական Հայաստանի և Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Բաքվի ու Սովետական Միության կուլտուրական այլ կենտրոնների բարձրագույն ուսումնական հիմնարկներում ուսանել և բարձրագույն կրթություն են ստացել հազարավոր հայ երիտասարդներ, որոնք ներկայումս խոշոր աշխատանք են կատարում մեր արդյունաբերության, սոցիալիստական գյուղատնտեսության, կուլտուրական շինարարության, գիտության, գրականության, արվեստի, ժողովրդական առողջապահության և մեր կյանքի մյուս բոլոր բնագավառներում։

Ներկայումս ռեսպուբլիկայում աշխատում են ավելի քան 5000 ինժեներներ՝ գյուղատնտեսներ, բժիշկներ և այլն, մինչդեռ նախասովետական շրջանում դրանց քանակը հաշվվում էր տասնյակներով։ Գիտության ճակատում և բարձրագույն ուսումնական հիմնարկներում մեր երիտասարդության կոմունիստական դաստիարակության բնագավառում աշխատում են մոտ 100 պրոֆեսորներ և դոկտորներ, ավելի քան 500 դոցենտներ և գիտության թեկնածուներ։

Ազգային այդ կադրերի պատրաստման, դաստիարակության և հարատև աճման գործում անգնահատելի դեր է կատարել և կատարում է ռուս մեծ ժողովուրդն իր սոցիալիստական կուլտուրայով ու գիտությամբ, իր պայծառ մտքով, կայուն բնավորությամբ և համբերատարությամբ, իր ռևոլյուցիոն թափով ու վճռականությամբ, հերոսությամբ ու աշխատասիրությամբ։

Մեր կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում խոշորագույն է ռուսական սոցիալիստական կուլտուրայի բարերար ազդեցությունը։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 385—386։

[2] „Социалистическое строительство Арм. ССР" (1920—1940 гг.), Ереван, 1940, стр. 109.

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, որը հանդիսանում է ռեսպուբլիկայի գիտական մտքի կենտրոնը, ստեղծվել, ամրապնդվել, զարգացման ներկա աստիճանին է հասել ռուս մեծ ժողովրդի, նրա գիտնականների օգնությամբ։

Հայ ժողովրդի կյանքում խոշորագույն իրադարձություն ու մեծ նվաճում է հանդիսանում Վ. Ի. Լենինի երկերի 4-րդ հրատարակության 35 հատորների հրատարակությունը հայերեն լեզվով, որն ավարտվեց 1952 թ. և ընկեր Ստալինի երկերի 13 հատորների հրատարակությունը։ Հայերեն լեզվով մեծ քանակությամբ լույս են տեսել Մարքսի և Էնգելսի աշխատությունները։

1920 թ. մինչև այժմ մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններից հայերեն լեզվով լույս է տեսել 520 անուն աշխատություն, 5.305 հազար օրինակ ընդհանուր տիրաժով[1]։

Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի դժվարին տարիներին ռուս մեծ ժողովուրդը իր վրա վերցնելով պատերազմի ամբողջ ծանրությունը, Կոմունիստական պարտիայի, մեծ առաջնորդ ընկեր Ստալինի գլխավորությամբ իր շուրջը համախմբելով մեր մեծ Հայրենիքի բոլոր սոցիալիստական ազգերին ու ժողովուրդներին, ապահովեց սովետական ժողովրդի համաշխարհային պատմական հաղթանակը նենգ թշնամու դեմ, ապահովեց մեր երկրի ազատությունն ու անկախությունը, եղբայրական օգնության ձեռք մեկնեց Եվրոպայի և Ասիայի շատ ժողովուրդների։

Շնորհիվ ռուս ժողովրդի հերոսական պայքարի, նրա գլխավորությամբ Հայրենական պատերազմում սովետական ժողովուրդների ձեռք բերած պատմական հաղթանակի, մեր երկրի բոլոր ժողովուրդները, այդ թվում նաև հայ ժողովուրդը, փրկվեցին ֆաշիստական ստրկացումից և ֆիզիկական բնաջնջման սպառնալից վտանգից։

Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո, Սովետական Միության կառավարության, ռուս ժողովրդի օգնության շնորհիվ Սովետական Հայաստանի կառավարությունը հնարավորություն ստացավ արտասահմանից Հայաստան տեղափոխել մոտ 100 հազար հայ աշխատավորների, որոնք կեղեքվում ու տառապում էին կապիտալիստական երկրներում։ Գալով Սովետական Հայաստան, այժմ նրանք ակտիվ կերպով մասնակցում են սոցիալիստական շինարարությանը։

Գնահատելով ռուս ժողովրդի, նրա բանվոր դասակարգի դերը սովետական ժողովուրդների բարեկամության և նրանց ձեռք բերած համաշխարհային-պատմական հաղթանակների գործում, ընկեր Ստալինը գրել է. «Բոլոր երկրների ռևոլյուցիոն բանվորները միահամուռ կերպով ծափահարում են սովետական բանվոր դասակարգին և, ամենից առաջ, ռուս բանվոր դասակարգին, սովետական բանվորների ավանգարդին, որպես իրենց ճանաչված առաջնորդի, որը վարում է ամենառևոլյուցիոն և ամենաակտիվ քաղաքականություն, ինչպիսին երբևիցե, երազել են վարել մյուս երկրների պրոլետարները»[2]։

Ավարտելով սոցիալիզմի կառուցումը, Սովետական Միության ժողո-

---

[1] „Коммунист", օրգան Հայաստանի ԿՊԿԿ և Երկոմի, 1953 թ., 15 մարտի։
[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 13, էջ 28։

վուրդները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ներկայումս իրականացնում են աստիճանական անցումը սոցիալիզմից դեպի կոմունիզմ։

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XIX համագումարը, ամփոփելով սովետական ժողովրդի պատմական խոշորագույն հաղթանակը, իր որոշումներով, որոնց հիմքում դրված են ընկեր Ստալինի «Սոցիալիզմի էկոնոմիկական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» հանճարեղ աշխատությունը և ընկեր Ստալինի պատմական ճառը համագումարի եզրափակիչ նիստում, ուրվագծեց այն կարևորագույն խնդիրները և ուղիները, որոնց անշեղ կենսագործումով սովետական ժողովուրդը հաղթական կերպով ընթանում է դեպի կոմունիզմ։ XIX համագումարի որոշումները նախատեսում են երկրի ժողովրդական տնտեսության նոր, է՛լ ավելի հզոր վերելք, միութենական և ավտոնոմ ռեսպուբլիկաների էկոնոմիկայի, կուլտուրայի բուռն ծաղկում։

Համագումարն իր որոշումներով առանձնահատուկ կերպով ընդգծեց իդեոլոգիական աշխատանքների ուժեղացման անհրաժեշտությունը։

Իդեոլոգիական աշխատանքների կարևորագույն խնդիրներից մեկը հանդիսանում է աշխատավորական մասսաներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի, սոցիալիստական հայրենասիրության և ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակելը, մեր կադրերին, բոլոր սովետական մարդկանց՝ բուրժուական ռեակցիոն իդեոլոգիայի՝ կոսմոպոլիտիզմի, բուրժուական նացիոնալիզմի և թշնամական իդեոլոգիայի ամեն տեսակի արտահայտությունների դեմ անհաշտ պայքար մղելու ոգով դաստիարակելը։

Կուռ շարքերով համախմբված Կոմունիստական փառապանծ պարտիայի, նրա լենինյան-ստալինյան Կենտրոնական Կոմիտեի ու Սովետական կառավարության շուրջը, զինված ընկեր Ստալինի «Սոցիալիզմի էկոնոմիկական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» հանճարեղ աշխատությամբ, պարտիայի XIX համագումարի պատմական որոշումներով, սոցիալիստական հայ ազգը, հզոր Սովետական Միության սոցիալիստական ազգերի ու ժողովուրդների հետ միասին, ռուս մեծ ազգի գլխավորությամբ հաստատ ու վճռական քայլերով առաջ է ընթանում դեպի կոմունիզմ։